



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 7

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում:
2. Դպրոցականների ամենամյա օլիմպիադայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին:
3. Կուրատորների աշխատանքների ընթացքը ֆակուլտետում:
4. Համալսարանի 100-ամյակին ընդառաջ ֆակուլտետի հեռանկարային գործունեության ծրագրի առաջադրում և հաստատում:
5. Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության պետական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ:
6. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 23-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի 7-րդ նիստի օրակարգը:

1-ին հարցի առիթով արտահայտվեցին պրոֆ. Ա. Ավագյանը և դոց. Ա. Սարգսյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ ֆակուլտետում 2015-16 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանը ընթացել է բնական հունով, և արդյունքները հիմնականում բավարար են: Հայոց լեզու և գրականության ու սոցիալական մանկավարժության բակալավրիատի բաժիններում քննության մասնակցելու թույլտվություն են ստացել 685 ուսանողներ, որոնցից անհարգելի պատճառով չեն ներկայացել 8-ը: Անբավարար գնահատականներ են ստացել 157 ուսանողներ, ընդ որում՝ մեկ անբավարար՝ 96-ը, երկու անբավարար՝ 33-ը, երեք անբավարար՝ 12-ը, չորս անբավարար՝ 5-ը, իսկ հինգ և ավելի անբավարար՝ 11-ը: Քննաշրջանի արդյունքները անհամեմատ լավ են մագիստրատուրայում. քննության մասնակցելու թույլտվություն են ստացել 89 մագիստրոսներ, որոնցից անբավարար գնահատականներ են ստացել միայն 3-ը:

Անդրադառնալով օրակարգի **2-րդ**՝ դպրոցականների հանրապետական ամենամյա օլիմպիադայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին **հարցին**՝ ֆակուլտետի ղեկանը տեղեկացրեց, որ «Հայոց լեզու և գրականության» առարկաների համար արդեն նշանակվել են համանախագահներ /պրոֆ. պրոֆ. Ա. Մուրադյան և Յու. Ավետիսյան/, և նրանք այժմ զբաղված են քննական առաջադրանքների ստեղծմամբ ու ենթահանձնաժողովների ձևավորման աշխատանքներով:

Օրակարգի **3-րդ հարցի** առիթով՝ կուրատորների աշխատանքների ընթացքը ֆակուլտետում, դարձյալ ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը: Նա իր դժգոհությունը, ավելին՝ վրդովմունքն արտահայտեց այն կուրսղեկներից, որոնք, իրենց տարեկան ծանրաբեռնվածության մեջ ունենալով հանդերձ աշխատանքային որոշակի ժամաքանակներ, թերանում են իրենց աշխատանքներում, երբեմն պարզապես «չգիտեն» իրենց կուրատորության մասին: Ֆակուլտետի ղեկանը բոլոր ամբիոնների վարիչներից պահանջեց անմիջապես շտկել առկա թերացումները և արդյունքների մասին զեկուցել ղեկանատին:

Օրակարգի **4-րդ հարցը**՝ ԵՊՀ-ի 100-ամյակին ընդառաջ ֆակուլտետի հեռանկարային գործունեության ծրագրի առաջադրումն ու հաստատումը, դարձավ աշխույժ քննարկումների առարկա: Ամբիոնների վարիչներն ու գիտխորհրդի անդամները հավաստիացրին, որ արդեն ունեն հեռանկարային ուշագրավ ծրագրեր և գործուն մասնակցություն կունենան հոբելյանական միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը:

Օրակարգի **5-րդ հարցի** առիթով իրենց հաշվետվություններով հանդես եկան հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության պետական հանձնաժողովների նախագահները:

«Հայոց լեզու և գրականություն» առարկայական քննական հանձնաժողովի նախագահ Բ. Գ. Պ. Վլադիմիր Կիրակոսյանը նշեց, որ քննություններին մասնակցել են ընդհանուր հաշվով 10 շրջանավարտներ, որոնցից 3-ը՝ հայոց լեզվից, 7-ը՝ հայ գրականությունից: «Հայոց լեզու» առարկայից բոլոր՝ 3 շրջանավարտներն էլ ստացել են «լավ» գնահատականներ, իսկ «Հայ գրականությունից»՝ 7-ից՝ 4-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար» գնահատականներ: Վլ. Կիրակոսյանը մասնավորապես նշեց, որ թեզերի թեմաները թեն հաջող էին ընտրված, այնուամենայնիվ կատարողները երբեմն լավ չէին պատկերացնում իրենց առաջադրված խնդիր-

րը: Այս տեսակետից համեմատաբար հաջողված էին լեզվական թեմաների կատարումները: Նա նաև նկատեց, որ գրախոսները գնահատումների մեջ երբեմն անհարկի շոայլ էին, քանի որ պաշտպանության ընթացքում կատարողները չէին կարողանում արդարացնել իրենց տրված գնահատականները:

«Կրթության կառավարում» մասնագիտությամբ քննական հանձնաժողովի նախագահ մ. գ. դ., պրոֆ. Հայկ Պետրոսյանը մանրամասն ներկայացրեց քննական արդյունքները, այն է՝ մագիստրոսական թեզի պաշտպանության մասնակցած շրջանավարտների թիվը՝ 15, որոնցից՝ «20» միավոր՝ 6-ը, «19» միավոր՝ 2-ը, «18» միավոր՝ 3-ը, «17» միավոր՝ 1-ը, «16» միավոր՝ 1-ը, և «15» միավոր՝ դարձյալ 1-ը: Պրոֆ. Հ. Պետրոսյանը նկատեց, որ հրապարակային պաշտպանության ժամանակ ուսանողները ցուցաբերեցին պատրաստվածության բարձր մակարդակ. նրանք տիրապետում էին հետազոտական ամբողջ նյութին, կարողացան ներկայացնել աշխատանքի առանցքային հարցերը, սեփական հետազոտությունների վերլուծությունն ու արդյունքների ամփոփումը, հետազոտության հիմնական եզրակացությունները, պատասխանել հանձնաժողովի անդամների կողմից առաջադրված հարցերին: Հանձնաժողովի նախագահն այնուհետև հայտնեց մեկ-երկու ցանկություն /ընդլայնել հետազոտությունների շրջանակները, բացառել արդիականությունը կորցրած գրականության տվյալների օգտագործում, վերանայել ծավալային հարցը/:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ ԵՊՀ-ի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Տիգրանուհի Յուլյի Ներսիսյանի ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դոց. Վ. Պետրոսյանը, պրոֆ. պրոֆ Լ. Հովսեփյանը, Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը և Ալ. Մակարյանը:

Նկատվեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Տիգրանուհի Յուլյի Ներսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման եղել է «Հայկական, ռուսական և անգլիական ժողովրդական հեքիաթների տեքստաբանական վերլուծությունը»: Քանի որ խորագրում հստակ չի երևում աշխատանքի լեզվաբանական ուղղվածությունը, ուստի նպատակահարմար է թեման վերանայել ու հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Հեքիաթն իբրև տեքստ և խոսույթ. ըստ հայկական, ռուսական և անգլիական հեքիաթների նյութի»:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Տիգրանուհի Յուլյի Ներսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հեքիաթն իբրև տեքստ և խոսույթ. ըստ հայկական, ռուսական և անգլիական հեքիաթների նյութի»՝ Ժ 02.02 /Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն/ մասնագիտությամբ:

բ/ մանկավարժության ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Արա Կառլենի Սաղաթելյանին դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին մասնակցելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոցենտ Գ. Բաբայանը:

Նշվեց, որ Արա Սաղաթեյանը մանկավարժության ամբիոնում ունի դասախոսի բազմամյա փորձ /13 տարվա մանկավարժական ստաժ/, տպագրել է գիտական 8 հոդված, որոնցից 2-ը՝ ուսումնամեթոդական: «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիարցման վերջին ցուցանիշը եղել է 3,20:

Վերոհիշյալ տվյալները բավարարում են ՀՀ ԲՈՀ-ի պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել մանկավարժության ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Արա Կառլենի Սաղաթեյանին՝ մասնակցելու դոցենտի կոչման համար սահմանված ընթացակարգին:

Վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ